

մարդ պահանջառամբ այս ուշին առաջարկուած մձնալ մա-
ստակած առ
ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԹՐՈՒՍԻՑ ԵԿԵՂԵՑԻ

ՊԵՏԵՐԻՆԸ ԵՒ ՊՐԱԼՈՍԼԱԼ ԷԿԵՂԵՑԻՆ.

Ս. ՍՅՆՈՒՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԱՄԱՅԱԲՐՆԵՐԻ ԽՈՐՀԻ ԳԵՒՆ
ՆԵՐԿԱՅԱԳՐԵԿ ԽԵՐ ԵՆԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅՆ ԽՆԴՔԻ ԱռԹԻւ, ԹԵ
ԽՆՀ ԳԵՐԱ ԱԲԻՄԻ ԲԱՆՀ ԱԼԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԿՈՍԼԱԼ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆԼԱՄԱՄԱՄԸ, ՈՐ ՀԵՏԵԿԵԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՄԵՐՆ Է ԱՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ:

1) ԿՐՈՆԻ և ԽՂՃԻ աղատութեան սկզբունքի ամբապնդելու
համար բարձրագոյնս շնորհուած օրէնքները անշեղ գործադրելով
կեանքի մէջ՝ կառավարութիւնը պարտաւոր է հիմնական օրէնք-
ների պահանջմամբ աչալուրջ հոկել պրաւոսլաւ, պետութեան
մէջ ալեռող, եկեղեցու իրաւունքների և արտօնութիւնների վերայ:

2) Եկեղեցու պետական իրաւաբարութեան սահմանում
պաշտպանելով պրաւոսլաւութեան շահերը՝ պետութիւնը ընդու-
նում է ուսւ պրաւոս. եկեղեցու կատարեալ աղատութիւնը
կարգաւորելու խեր ներքին գործերը ժողովական կանոնների, իւր
սեփական որոշումների և օրէնքների հիմքերով, հոկելով միայն,
որ եկեղ. կարգադրութիւնները համապատասխան լինին պե-
տութեան ընդհանուր օրէնքների հետ:

3) Ընդունելով ընդարձակ վերանորոգութեանց անհրա-
ժեշտութիւնը ուուս. պրաւոսլալ եկեղեցու մասերում՝ պետու-
թիւնը այս մեծ և սուրբ գործը ամբողջովին վերապահում է
նոյն եկեղեցու տեսչութեան և դէմո ընդհանուր համայն ուու-
սական եկեղեցական ժողովի: Գործակցել ժողովի յաջող իրա-
գործման և դործադրել նորա ապագայ կանոնները կեանքի մէջ
ըստ պահանջման պետական օգնութեան՝ կառավարութիւնը
իւր պարտքն է համարում:

4) Կառավարութիւնը՝ աչքի առաջ ունենալով պրաւոս-
լաւ ծխերի բարոյական շինութեան յատուկ անհրաժեշտու-
թիւնը՝ ինչ շափով որ վերաբերում է պետութեան մասնակ-
ցութեան՝ իւր պարտքն է համարում ընդ առաջ գնալ եկե-
ղեցու կարիքնելին, կատարեալ աջակցութիւն ցոյց առալ եկեղե-

ցական նախագծերին, որ պահանջում էն պետական լշխանութեան օրինաց սրբոգործութը:

5) Այլ և կառավարութիւնը իւր պարտքն է համարում ոչ միայն տիրապետող եկեղեցու, այլ նոյն իոկ ժողովրդի և պետութեան առաջ մշտապէս հոգ տանել պրաւոոլաւ ծխական հոգեորականութեան պատշաճաւոր ապահովութեան վերայ պետական գանձարանից գումար յատկացնելով:

6) Պրաւոոլաւ եկեղեցականների որդոց, իրեւ քահանայուցուների, գպրոցական կրթութիւնը նոյն եկեղեցու տեսչութեան և հայեցողութեան գործն է. ուստի կառավարութիւնը իւր կողմից արդար և օգտակար պիտի համարի իրաւունք տալ հոգեոր գպրոցների ուսներին անարդել աեզափոխուել աշխարհիկ կրթականութիւնները, պահանջելով՝ որ հոգեոր և աշխարհիկ գպրոցների ուսման չափը հաւասար լինի:

7) Ժողովրդի կրթութեան գործը ոչ միայն Եկեղեցու անկապտելի իրաւունքը, այլ նոյն իոկ նորա սրբազնն պարաբը համարելով, Կառավարութիւնը՝ թէ ժոյնութիւն ունեցող եկեղեցական գպրոցները և թէ նոր բացուելիքները՝ ուրիշ վարչութեանց գպրոցներին համահաւասար մի առանձին մեծութիւն պիտի ընդունի միւս ժողովրդական կրթական անդաստանի մէջ, որով պետութիւնը պարտաւորուում է բաւարարութիւն տալ Ռուսաստանում ընդհանուր ժողովրդի կրթութեան հասունացած կարիքին:

Քիսոնեական գիւղնագիտութիւնը. Այս յօդուածը, որի քաղուածքը տալիս ենք «Русъ» 86-եցորդ համարից, պատկանում է Պետերուրդի հոգեոր ճեմարանի ուսուցչապետ հ. Միլայէլ վարդապետին, որ անսպասելի կերպով զրկուեցաւ ուսուցչական ամբիոնից և աքսորուեցաւ Յածուած կանքը: Յօդուածը մի պատասխան է այն հարցին, թէ կարելի՞ է արդեօք պետական գիւղագիտութիւնը ճշմարիտ բարոյական սկզբունքների վերայ հիմնել:

Քիսուսնեական գիւղագիտութիւնը, որտեղ գիւղագիտութիւն է. և մի քահանայ գժուար թէ եարող կը իւնի զուտ գիւղանոգէտ գառնալ: Ես ընտրել եմ ազգային համայնականութիւնը, որի համար էլ աքսորումեն, և որը առաջին տեղն է գնումանձնաւորութեան պաշտամունքը, զի մարդկէ հոգի են. սակայն ոյսչափ, և ոչ աւելի: Եւ ես կժնամքրիստոնեայ և մեր քրիստոնեականութիւնը նույն չէ քաղաքացու կամ հակա-

հըէտկան համայնականութեան։ Քրիստոնէական դիւանագիտութեան խնդիրն է մարմնացնել կեանքում այն միտքը, թէ Քրիստոն Գողգոթայից աղքատութեան բոլոր տեսակները, անհաւատութիւնը, սարկութիւնը, բանտի ամէն մի լուսամուտը, վաշխառութեան իւրաքանչիւր գործ, ազատ հոգու ամէն մի բռնութիւն մի քիծ է առանց բացառութեան իւրաքանչիւր քրիստոնէի խղճի վերայ, նորա ամօթն ու խայտառակութիւնն է։ Այս աեսակէտով հարկաւ քրիստոնէութիւնը նոյնացնում եմ այն վարդապետութեան հետ, թէ «զրամագլխի անեցու մը» վաշխառութիւն է։ թէ աշխատաւորինն է գործի ամրողջ արդիւնքը, որ չէ կարելի բեռնաւորել հոգին և մարմինը ուժից վեր աշխատանքով ելն։

Վակայն անհաւասարութեան, աղքատութեան և բռնութեան մահով չէ վերջանում իմ ձգտումը։ Ես աւելին եմ մտածում, այժմեան մարդու մահուան և հոգով ու մարմնով ու ժեղ մարդու ծննդեան մասին։ որ կստեղծի «երկինք նոր և երկիր նոր»։ Ես տենչում եմ, որ ծնուի ամենազօք մի յարգանք գէպի մարդու առառաջնութիւնը և նորա ամենակարողութիւնը։ իսկ այս հնարաւոր կլինի, երբ մարդու՝ աշխատանքի և ազատութեան իրաւանց հետ կերգուի և «Մարդ Աստուծոյ մասին»՝ Քրիստոնի, որ թափեց իւր արիւնը սրբելու երկիր երեսից աղքատութիւնը, տիրապետութեան և սորկութեան խայտառակութիւնը։

Ես խորին կերպով համոզուած եմ, որ քրիստոնէութեան երեք քառորդ մասը ինձ համամիտ են, միայն սովորութեամբ կուրացած քահանաները պաշտպանում են մի քանի հին տարօնակ դաւանանքներ։ բայց իսկապէս հասարակաց վշտով նոքա էլ տանջւում են, շատ լաւ հասկանում են աւետարանի ճըշմարաւթիւնը և ուստի բոլորն էլ ինձ հետ են։ Եւ կգայ ժամը, երբ նոքա պարլամենտական պետութեան մէջ կոփուուեն աւետարանական աղքատութեան և հաւասարութեան ճշմարտութեամը։

Հոգիւրականութիւնը եւ ընտրութիւնները. Պետերբուրգի Ս. Սինոդը մի շրջաբեւականով գիմում է թեմական առաջնորդների և հետեւեալ հրահանգները առաջարկում։

- 1) Հրաւիրել ըոլոր քահանաներին անպատճառ մասնակցել պետական գումայի ընտրութիւններին։
- 2) Զանալ ըստ կարելւոյն շատ հոգեւուականներ ընտրուեն

պետ. Գումար. անդամ. ովովնետեւ հոգեօրականութեան աւելի են ծանօթ երկրի կարիքները.

3) Ընտրութիւնները սկսել մաղթանքներով և բացատրել ընտրութիւնից սպասելիք լիսան ու օգուտը, նայելով ընտրեալների ձգտմանց.

4) Զերմաջերմ համազել, որ փողով կամ գինով չժախեն ընտրողները իրենց ձայնը, չհաւատան սուտ խոստմանց, չքաշուեն հալածանքից և ծաղրից, այլ առաքեալների և մարտիրոսների քաջութեամբ կանգնեն Քրիստոսի հաւատի համար:

5) Պետական խորհրդի անդամ ընտրելուց առաջ՝ կատարել մաղթանք և առաջնորդը կամ ժողովրդի յարգելի մի քահանայ քարոզ խօսի:

6) Օրհնել ընտրողներին և ապա ընտրեալին խաչ ու աւետարանով և յորդորել, որ կանգնէ պինդ հայրենիքի, հաւատի և թագաւորի համար, և խոստումն առնել ընտրուսղ անդամից հէնց եկեղեցում:

7) Յանձնարարութեամ է թեմական առաջնորդներին, եթէ հնարաւոր և օգտակար համարեն, տալ որոշ հրահանգներ՝ նայած տեղական պայմաններին, իրենց ոտորագրեալ հոգեօրականութեան առանձին շրջաբերականներով:

Մինսկի եպիսկոպոս Սրբազն Միխայէլը մի շրջաբերականով գիմում է իւր թեմի քահանաներին և բացատրելով ընտրութեանց ունենալիք հետեւանքը եկեղեցու և պետութեան համար մանրամասն հրահանգ է տալիս, որով նոքա գործունեայ մասնակցութիւն պիտի ունենան և աշխատեն յօդուտ այն կուսակցութեան, որ «Խօսկական ռուս մարդկանց» կուսակցութիւն է կոչուում, որին և ինքը վաղուց յարել է:

Նիկոլայ Օրնտասկի քահանան համարձակուել է իւր ժողովրդին բացատրելու մահուան պատժի հակասուածային լինելը թէ «Մի սպաներ»: Իսկ գիւղացիք մասնել են, թէ հակառակութեան քարողութեամբ է պարտապում և զսգուում է ժողովրդեան օրինաւոր իշխանութեան դէմ: Թեմական առաջնորդը զրկել է նորան քահանայագործութիւնից և աքսորել վանք ապաշխարելու: